

Canon

PowerShot **G5X** Mark II

Թվային տեսախցիկի
"Ինչպես մեկնարկել" ուղեցույց

ՀԱՅԵՐԵՆ

Ձեռնարկներ և ծրագրակազմ


Տեսախցիկի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար անդրադարձեք տեսախցիկի վրա փակցված գործառնությունների ուղեցույցին կամ *[Руководство по расширенным операциям/ Տեսախցիկի օգտվողի լրացուցիչ ուղեցույցին]*, որը կարող եք ներբեռնել Canon-ի կայքից:



Տեսախցիկի և ոսպնյակների ձեռնարկները, ինչպես նաև ծրագրակազմը կարող եք ներբեռնել հետևյալ էջից:

<http://www.canon.com/icpd/>

- Համացանցին միացված համակարգչից անցեք վերոնշյալ URL հասցեով:
- Մտեք ձեր երկրի կամ տարածաշրջանի համար նախատեսված կայքը:
- Ձեռնարկները դիտելու համար պահանջվում է Adobe Reader:
- Ծրագրակազմը ներբեռնելու և տեղադրելու մասին հրահանգներ ստանալու համար անդրադարձեք ներբեռնված ձեռնարկներին:
- Ձեռնարկների և ծրագրակազմի վեբկայքի էջ կարող եք մտնել նաև QR կոդի միջոցով, որը կարող եք տեսնել տեսախցիկի վրա: QR կոդը տեսնելու համար ընտրեք MENU > [🔧 Параметры функций/ 📄 Гործառնությունների կարգավորումներ] > [Ссылка на руководство/ПО/ Ձեռնարկի/ծրագրակազմի URL]:



Ձեռնարկները կամ ծրագրակազմը ներբեռնելիս կարող է պահանջվել Սերիալ համարը (սարքի վրա գրված համարը): Պահանջվելու դեպքում մուտքագրեք տեսախցիկի ներքևի մասում տպված համարը:

Նախնական ծանուցում և իրավական տեղեկություններ

- Նախապես նկարեք և փորձարկեք որոշ պատկերներ՝ ստուգելու համար, որ պատկերները ճիշտ են տեսագրվել: Նկատի առեք, որ Canon Inc.-ը, իր մասնաճյուղերը և դուստր կազմակերպությունները պատասխանատու չեն պատահական վնասվածքների համար, որոնք կարող են առաջանալ տեսախցիկի կամ լուսարձեքի անսարքության հետևանքով, այդ թվում նաև հիշողության քարտերի համար, որոնց արդյունքում պատկերը կարող է չտեսագրվել կամ այնպես տեսագրվել, որ ընթերցելի լինի միայն համակարգչի կողմից:
- Օգտվողի կողմից առանց թույլտվության մարդկանց կամ հեղինակային իրավունքով պաշտպանված նյութերը լուսանկարելը կամ ձայնագրելը (տեսագրություն և/կամ ձայնագրություն) կարող է համարվել ներխուժում այդ մարդկանց անձնական կյանք և/կամ այլ օրինական իրավունքների՝ այդ թվում՝ հեղինակային իրավունքի և այլ մտավոր սեփականության իրավունքների խախտում: Նշենք, որ սահմանափակումները կարող են կիրառվել նույնիսկ այն դեպքում, երբ նման լուսանկարումը կամ ձայնագրությունը նախատեսված է միայն անձնական օգտագործման համար:
- Տեսախցիկի երաշխիքի կամ հաճախորդների աջակցման վերաբերյալ տեղեկությունների համար անդրադարձեք տեսախցիկի Օգտվողի ձեռնարկի հետ տրամադրված երաշխիքի վերաբերյալ տեղեկություններին:
- Թեև Էկրանը արտադրված է բարձր ճշգրտության պայմաններում և փիքսելների ավելի քան 99,99%-ը համապատասխանում է դիզայնի տեխնիկական բնութագրերին, շատ հազվադեպ դեպքերում որոշ փիքսելներ կարող են որոշ թերություններ ունենալ կամ ցուցադրվել կարմիր կամ սև կետերի տեսքով: Սա չի նշանակում, որ տեսախցիկը վնասված է կամ դա չի կարող ազդել տեսագրված պատկերների վրա:
- Տեսախցիկը երկար ժամանակ օգտագործելիս կարող է տաքանալ: Դա չի նշանակում, որ այն վնասված է:

Անվտանգության հրահանգներ

- Անպայման ծանոթացեք այս հրահանգներին, որպեսզի սարքավորումը ճիշտ աշխատեցնեք:
- Հետևեք այս հրահանգներին օպերատորին կամ այլ մարդկանց վնասվածքներից զերծ պահելու համար:



ԶԳՈՒՀԱՑՈՒՄ

Կարող է առաջացնել լուրջ վնասվածքների կամ մահվան դեպքերի հավանականություն:

• Սարքավորումը հեռու պահեք երեխաներից:

Մարդու պարանոցի շուրջ փաթաթված ժապավենը կարող է հանգեցնել խեղդամահության:

• Սարքավորման հետ օգտագործեք միայն հրահանգների ձեռնարկում նշված հոսանքի աղբյուրները:

• Մի քանդեք կամ ձևափոխեք սարքը:

• Ուժեղ մի ցնցեք կամ թափահարեք սարքը:

• Ձեռք մի տվեք դուրս եկած մասերին:

• Մի օգտագործեք սարքը ցանկացած արտասովոր բան նկատելիս, օրինակ՝ ծուփ կամ տարօրինակ հոտ:

• Մի օգտագործեք օրգանական լուծիչներ, օրինակ՝ ալկոհոլ, բենզին կամ ներկերի նոսրացուցիչներ սարքը մաքրելու համար:

• Մի՛ թրջեք ապրանքը:

• Մի մտցրեք օտար առարկաներ սարքի մեջ և վրան հեղուկ մի թափեք:

• Մի օգտագործեք սարքն այնտեղ, որտեղ կարող են առկա լինել դյուրավառ գազեր:

Սա կարող է էլեկտրահարում, պայթյուն կամ հրդեհ առաջացնել:

• Տեսադաշտ որոնող հարմարանքով ապրանքների համար վերջինիս միջոցով մի՛ փնտրեք վառ լույսի աղբյուրներ, ինչպիսին են պայծառ օրվա արևը կամ լազերային լույսերը և արհեստական լույսի այլ հզոր աղբյուրները:

Սա կարող է վնասել տեսողությունը:

• Հետևեք այս հրահանգներին՝ փաթեթի հետ տրամադրված կամ այլ՝ վաճառքում առկա մարտկոցի բլոկներ օգտագործելիս:

- Մարտկոցները/մարտկոցի բլոկները օգտագործեք միայն նրանց համար հատկորոշված սարքերի հետ:

- Հեռու պահեք մարտկոցները/մարտկոցի բլոկները տաքությունից կամ կրակից:

- Մի լիցքավորեք մարտկոցները/մարտկոցի բլոկները չթույլատրվող լիցքավորիչներով:

- Կոնտակտները միշտ մաքուր պահեք, մի կպցրեք դրանց մետաղական կոճակներ կամ այլ մետաղական առարկաներ:

- Մի օգտագործեք այն մարտկոցները/մարտկոցի բլոկները, որոնցից հոսք էք նկատում:

- Մարտկոցները/մարտկոցի բլոկները ոչնչացնելիս՝ փաթաթեք կոնտակտները մեկուսիչ ժապավենով կամ այլ միջոցներով:

Սա կարող է էլեկտրահարում, պայթյուն կամ հրդեհ առաջացնել:

Եթե մարտկոցը/վերալիցքավորվող մարտկոցը հոսում է, և նյութը շփվում է ձեր մաշկի կամ շորի հետ, ապա ամբողջովին լվացեք այդ հատվածը առատ հոսող ջրով: Աչքի հետ շփման դեպքում ամբողջովին լվացեք այն մաքուր առատ հոսող ջրով և անհապաղ դիմեք բժշկական օգնության:

- Սարսկոցի լիցքավորիչը կամ ՓՅ հարմարիչն օգտագործելիս՝ մանրամասն ծանոթացե՛ք այս հրահանգներին:
- Պարբերաբար չոր լաթով մաքրե՛ք կուտակված փոշին հոսանքի խրոցակի և վարդակի վրայից:
- Մի մտցրե՛ք կամ հանե՛ք խրոցակը վարդակի միջից թաց ձեռքերով:
- Մի օգտագործե՛ք սարքը, եթե հոսանքի խրոցակը լրիվ մտցրած չէ վարդակի մեջ:
- Խրոցակը և կոնտակտները միշտ մաքուր պահե՛ք, մի կպցրե՛ք դրանց մետաղական կոճակներ կամ այլ մետաղական առարկաներ:
- Ձեռք մի տվե՛ք լիցքավորիչին կամ ՓՅ հարմարիչին, երբ այն միացված է հոսանքի վարդակին, կայծակի ժամանակ:
- Մի՛ դրե՛ք ծանր առարկաներ հոսանքի լարի վրա: Մի՛ վնասե՛ք, կտրե՛ք կամ փոփոխե՛ք հոսանքի լարը:
- Մի փաթաթե՛ք սարքը կտորով կամ այլ մատերիալներով օգտագործման ժամանակ կամ անմիջապես օգտագործելուց հետո, երբ այն դեռ տաք է:
- Սարքը երկար ժամանակ միացրած մի թողե՛ք հոսանքի աղբյուրին:

Սա կարող է էլեկտրահարում, պայթյուն կամ հրդեհ առաջացնել:

- Թույլ մի տվե՛ք, որ սարքը օգտագործման ընթացքում անընդհատ շփվի մաշկի նույն տեղի հետ:

Դա կարող է հանգեցնել ցածր ջերմաստիճանի շփման այրվածքների, այդ թվում՝ մաշկի կարմրության և բծերի, նույնիսկ եթե ապրանքի տաքությունը չի զգացվում: Եռոտանու կամ համանման սարքավորումների օգտագործումը խորհուրդ է տրվում միայն շոգ վայրերում և շրջանառության խնդիրներ կամ ոչ զգայուն մաշկ ունեցող մարդկանց համար:

- Հետևե՛ք հրահանգներին և անջատե՛ք սարքը այն վայրերում, որտեղ չի կարելի այն օգտագործել:

Չանջատելու դեպքում էլեկտրամագնիսական ալիքների ազդեցության ներքո դա կարող է անսարքություններ առաջացնել այլ սարքավորումների մոտ և նույնիսկ միջադեպերի առիթ հանդիսանալ:



ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Ունի վնասելու հավանականություն:

- Մի միացրե՛ք առկայծող լույսը աչքերի մոտ:

Այն կարող է վնասել աչքերը:

- Գոտին նախատեսված է միայն մարմնի վրա օգտագործման համար: Որսալին կցված ցանկացած ապրանք կամ այլ առարկա գոտուն կախելը կարող է վնասել ապրանքը: Բացի այդ, մի՛ թափահարե՛ք ապրանքը և մի՛ ենթարկե՛ք այն ուժեղ հարվածների:

- Ուժեղ մի սեղմե՛ք ոսպնյակը և զերծ պահե՛ք այն հարվածներից:

Դա կարող է վնասվածքներ հասցնել կամ վնասել սարքը:

- Առկայծող լույսը գործելիս արձակում է բարձր ջերմաստիճան: Նկարահանման ժամանակ առկայծող լույսի մասից հեռու պահե՛ք մատները, ձեռ մարմնի բոլոր այլ մասերը և առարկաները:



Այն կարող է այրվածքներ առաջացնել կամ անսարքություններ առաջացնել առկայծող լույսի մեջ:

- Սարքը մի թողե՛ք չափազանց բարձր կամ ցածր ջերմաստիճանային պայմաններում: Սարքը կարող է չափազանց շատ տաքանալ/սառչել և այրվածքներ կամ վնասվածքներ պատճառել, երբ ձեռք տաք նրան:

Նախապատրաստում

Կաշեգոտու կցումը


- 1** Կաշեգոտին ամրացրեք կաշեգոտու ամրացման տեղին:





- Կաշեգոտին կարելի է կցել նաև տեսախցիկի ծախս կողմում:

Մարտկոցի բլոկի լիցքավորումը

- 1** Չեռնեղեք մարտկոցի բլոկը լիցքավորիչի մեջ:




- 2** Մարտկոցի բլոկի լիցքավորումը:



- Լույսերի գույները
- Լիցքավորում. Նարնջագույն
- Ամբողջությամբ լիցքավորված. Կանաչ

- 3** Հեռացրեք մարտկոցի բլոկը:



Հիշողության քարտի նախապատրաստում

Օգտագործեք հետևյալ տեսակի ցանկացած տարողության հիշողության քարտերը (վաճառվում են առանձին):

- SD հիշողության քարտեր*¹
- SDHC հիշողության քարտեր*^{1,2}
- SDXC հիշողության քարտեր*^{1,2}




*1 Քարտեր, որոնք համապատասխանում են SD ստանդարտներին: Ինչևիցե, ոչ բոլոր քարտերը կարող են աշխատել տեսախցիկի հետ:


*2 Աջակցվում են նաև UHS-I հիշողության քարտերը:

Մարտկոցի բլոկի և հիշողության քարտի գետնեղումը/հեռացումը


1 Բացեք կափարիչը:




2 Չեղծեք մարտկոցի բլոկը:




Հեռացնելու համար.




3 Ձեռնդեղի հիշողության քարտը:



Ջեռացնելու համար.




4 Փակեք կափարիչը:




Ամսաթվի, ժամանակի, ժամային գոտու և լեզվի տեղակայումը


1 Միացրեք տեսախցիկը:




2 Կարգավորեք ժամանակային գոտին:



- ◀/▶ կոճակները կամ սկավառակը՝ ժամային գոտին ընտրելու համար → կոճակը




- կոճակը




- ▲/▼ կոճակները կամ օձիկ սկավառակը՝ ժամային գոտին ընտրելու համար → օձիկ կոճակը → ◀/▶ կոճակները կամ օձիկ սկավառակը՝ [OK/Լավ] ընտրելու համար → օձիկ կոճակը

3 Տեղակայեք ամսաթիվն ու ժամանակը:




- ◀/▶ կոճակները կամ օձիկ սկավառակը՝ ամսաթիվը կամ ժամանակը ընտրելու համար → օձիկ կոճակը → ▲/▼ կոճակները կամ օձիկ սկավառակը՝ կարգաբերելու համար → օձիկ կոճակը



- Ընտրեք [OK/Լավ] → օձիկ կոճակը

4 Սահմանեք ցուցադրման լեզուն:



- ▲/▼ կոճակները՝ [Язык/Լեզու] ընտրելու համար → օձիկ կոճակը




- ▲/▼/◀/▶ կոճակները՝ լեզու ընտրելու համար → օձիկ կոճակը

Տեսախցիկի փորձարկումը


Լուսանկարում

1 Միացրեք տեսախցիկը:




- Տեսախցիկն անջատելու համար կրկին սեղմեք ON/OFF կոճակը:

2 Մտեք AUTO ռեժիմ:




3 Խոշորացրեք կամ փոքրացրեք ըստ անհրաժեշտության:




- Նայելով էկրանին՝ տեղաշարժեք դիտափոխման լծակը:

Առկայծող լույսն օգտագործելու դեպքում.




4 Կիզակետեք (սեղմեք կիսով չափ):




- Կիզակետումից հետո տեսախցիկը ձայնային ազդանշան է տալիս:
- Կիզակետման մեջ վերցրած տարածքի շուրջը ցուցադրվում է հսքնակիզակետման (AF) կետը:

5 Լուսանկարեք (սեղմեք ամբողջությամբ):




Տեսանյութ նկարելու ժամանակ.



- Տեսագրման ընթացքում ցուցադրվում է [●REC] կոճակը:
- Տեսագրումը դադարեցնելու համար կրկին սեղմեք տեսագրման կոճակը:

Դիտումը

1 Սեղմեք [▶] կոճակը:



2 Ընտրեք պատկերները:



- Տեսահյուլվակները նշվում են [SET] [▶] նշանով:

Տեսանյութը նվագարկելու ժամանակ.



- [SET] կոճակը (երկու անգամ)
- Ձայնի ուժգնությունը կարգաբերելու համար սեղմեք ▲/▼ կոճակները:

Ապրանքանշաններ և լիցենզավորում

- SDXC պատկերանշանը հանդիսանում է SD-3C, LLC-ի ապրանքանշանը:

Հրաժարում պարտականություններից

- Արգելվում է սույն ուղեցույցի չլիցենզավորված վերարտադրումը:
- Այս ուղեցույցում ներկայացված պատկերազարդումներն ու էկրանի հանույթները կարող են թեթևակի տարբերվել իրական սարքավորումից:

Արտադրման երկիր. Ճապոնիա

Արտադրման ամսաթիվ. Արտադրանքի արտադրման ամսաթիվը տպված է փաթեթավորման վրա:

ООО «Канон Русь»

Серебряническая набережная, 29, 8-й этаж, бизнес-центр «Серебряный город», Москва, 109028, Россия

Ներմուծող Հայաստանի համար:

Կոնտակտային տվյալները գրված են փաթեթավորման վրա:

Պահեք ապահով տեղում:

Ապրանքի ոչնչացում

Այս ապրանքը պետք է ոչնչացվի պատշաճ ձևով՝ համաձայն Ձեր ազգային և տեղական օրենսդրության:

Տեխնիկական բնութագրեր

Հոսանքի աղբյուր	Մարտկոցի բլոկ NB-13L
Տեսախցիկի չափերը (CIPA ստանդարտին համապատասխան)	110,9 x 60,9 x 46,0 մմ
Տեսախցիկի քաշը (CIPA ստանդարտին համապատասխան)	Մոտ 340 գ (Քաշը՝ ներառյալ մարտկոցի բլոկը և հիշողության քարտը) Մոտ 316 գ (Քաշը՝ միայն կորպուսը)

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

ՄԱՐՏԿՈՑԸ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՐՏԿՈՑԻ ՏԵՍԱԿՈՎ ՓՈՒՍԱՐԻՆԵԼՈՒ ԴԵՊԵՌՄ ԿԱՐՈՂ Է ԱՌԱՋԱՆԱԼ ՊԱՅԹՅՈՒՆԻ ՎՏԱՆԳ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԱՐՏԿՈՑՆԵՐԸ ՈՂՆՉԱՑՐԵՔ ՀԱՄԱՁԱՅՆ ՏԵՂԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄՆԵՐԻ:

Արտադրանքի անխափան աշխատանքը ապահովելու համար խորհուրդ է տրվում

օգտագործել բնօրինակ Canon-ի լուսարբեր:

Խորհուրդ ենք տալիս օգտագործել USB մալուխներ, որոնք պաշտոնապես համարվում են

բնօրինակ Canon-ի լուսարբեր:

Օգտագործեք HDMI մալուխ, որը հասանելի է վաճառքում (տեսախցիկի վրայի միակցիչը D տեսակի է):

Խորհուրդ ենք տալիս օգտագործել մալուխներ, որոնք երկուսի երկարությունը չի

գերազանցում 2,5 մ:

Մոդելի համար՝ PC2355 (ներառյալ WLAN մոդուլը և BLE մոդուլի WM600 մոդելը): Ձեր մոդելը իմանալու համար տեսախցիկի ներքևի մասում կամ Էկրանի հետևում փակցված պիտակի վրա փնտրեք համար, որը սկսվում է PC-ով:

Երկրներ և տարածաշրջաններ, որտեղ թույլատրվում է Անլար գործառնություն
օգտագործումը

- Անլար գործառնության օգտագործումը արգելված է որոշ երկրներում և տարածաշրջաններում, իսկ ապօրինի օգտագործումը կարող է պատժվել օրենքով՝ համաձայն տեղի կանոնակարգումների: Անլար գործառնության կանոնակարգումները չխախտելու համար այցելեք Canon-ի վեբկայք և տեսեք՝ թե որտեղ է այն թույլատրվում: Նկատի առեք, որ Canon-ը պատասխանատու չէ անլար գործառնության օգտագործման հետևանքով առաջացած խնդիրների համար այլ երկրներում և տարածաշրջաններում: Հետևյալ գործողությունների հետևանքով կարող են կիրառվել իրավական տուգանքներ.

- Արտադրանքը փոփոխելու կամ ձևափոխելու համար

- Վկայագրման պիտակները արտադրանքի վրայից հեռացնելու համար

Մի օգտագործեք արտադրանքի անլար գործառնություն բժշկական սարքավորումների կամ այլ էլեկտրական սարքավորումների մոտ:

Արտադրանքի անլար գործառնություն բժշկական սարքավորումների կամ այլ էլեկտրական սարքավորումների մոտ օգտագործելու հետևանքով կարող են առաջանալ անսարքություններ այդ սարքերում:

CANON EUROPA N.V. Bovenkerkerweg 59, 1185 XB Amstelveen, The Netherlands
CANON INC. 30-2, Shimomaruko 3-chome, Ohta-ku, Tokyo 146-8501, Japan

[Отображ. логотипа сертиф./Վկայագրման պատկերանշանի ցուցադրումը] կարող էք ստուգել Ընտրացանկի կարգավորումներ ներդիրից: